ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 2260-Ա « 19 » հունիսի 2024թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի Հ.4274-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-ին կետով, հաշվի առնելով 22.11.2022 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության եզրակացությունը, քաղաքացու դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2009 թվականի մայիսի 15-ի «Թաիրովի փողոցի հ.46/48 բնակելի տան նկատմամբ Սիրվարդ Բալաբեկի Սիմոնյանի գույքային իրավունքները վերականգնելու, 269.94քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» հ.4274-Ա որոշման /այսուհետ Որոշում/ մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման վերնագրում, նախաբանում՝ «269.94» թիվը փոխարինել «224.73» թվով.

2) Որոշման նախաբանում, 1-ին կետում՝ «569.94» թիվը փոխարինել «524.73» թվով.

3) Որոշման վերնագրում, նախաբանում, 1-ին և 8-րդ կետերում՝ «Դավիթ Հասրատի Սիմոնյանի» բառերը փոխարինել «Սիրվարդ Բալաբեկի Սիմոնյանի» բառերով.

4) Որոշման նախաբանում՝ «Դավիթ Հասրատի Սիմոնյանի (ծնված 14.08.1951թ.)» բառերը փոխարինել «Սիրվարդ Բալաբեկի Սիմոնյանի (ծնված 02.07.1956թ.)» բառերով.

5) Որոշման 3-րդ կետում՝ «իրավաբանական վարչության պետին» բառերը փոխարինել «ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Հայկ Մուրադյանին» բառերով:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ